



# Անցկացվեց վառ ցուցահանդես-տոնավաճառ՝ նվիրված գյուղի աշխատավորների տոնին






Անցած շաբաթ Չալթրի կենտրոնական հրապարակում մեծ շուքով անցկացվեց գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության աշխատողների շրջանային Օրվա տոնակատարությունը: Տեղի ունեցավ արտադրության առաջավորների մեծարում: Նրանց հանձնվեցին պարգևներ և նվերներ:

Տոնի կապակցությամբ կազմակերպված գյուղատնտեսական ցուցահանդես-տոնավաճառին ակտիվորեն մասնակցեցին կոլտնտեսությունները, վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները, անհատ տնտեսություններ, որոնք մեծ ճաշակով ձևակերպել էին իրենց տաղավարները, առատորեն ներկայացրել աճեցրած բարիքներն ու ստացված արտադրանքը:

Մյասնիկյանի շրջանի գլխավոր Ա. Մ. Փորքշեյանի հրավերով տոնակատարությանը մասնակցելու էին եկել նաև մեր հարևան Նեկլինովսկի շրջանի գլխավոր Ա. Ի. Ժուռավլյովը, նրա առաջին տեղակալ Վ. Ֆ. Դանիլենկոն, շրջանի դեպուտատների ժողովի նախագահ Ա. Ա. Սոբոլևսկին, Ռոդիոնովո-Նեսվետայսկի շրջանի գլխավորի տեղակալ Մ. Ա. Գորշկովը:

Սկզբում հատուկ հանձնաժողովի անդամները շրջանի գլխավոր Ա. Մ. Փորքշեյանի առաջնորդությամբ հյուրերի հետ միասին շրջագայեցին հրապարակում, հանգամանորեն դիտեցին տաղավարներն ու գնահատեցին ձևակերպողների աշատանքը, որից հետո ամփոփվեցին "Լավագույն տաղավար" մրցույթի արդյունքները:

Ապա Ա. Մ. Փորքշեյանը ջերմորեն ողջունեց բոլոր ներկաներին և շնորհավորեց գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության աշխատողների շրջանային Օրվա առթիվ: Իր համռոտ ելույթում նա շեշտեց, որ, չնայած անբարենպաստ եղանակային պայմաններին, շրջանի գյուղի աշխատողները այս տարի էլ կարողացան հասնել լուրջ հաջողությունների: Աճեցվել, անկորուստ հավաքվել ու ամբարվել է ավելի քան 84000 տոննա հացահատիկային կուլտուրաների բերք: Արևածաղկի պլանտացիաներից ստացվել 17000 տոննա յուղասերմ, յուրաքանչյուր հեկտարը տվել է 21,7 ցենտներ բերք, որը լանվագույն ցուցանիշն է Ռոստովի մարզում: Այս տարվա անցած ժամանակամիջոցում արտադրվել է 3000 տոննա միս, 20 միլիոն ձու: Վաճառվել է ավելի քան 22000 տոննա կաթ, յուրաքանչյուր ֆուրաժային կովի կաթնատվությունը հասել է 4000 լիտրի: Գյուղատնտեսությունից ստացված ընդհանուր եկամուտը կազմել է 192 միլիոն ռուբլի, իսկ աշխատողների միջին աշխատավարձը՝ 18941 ռուբլի: Այդ ցուցանիշով մեր շրջանը գրավում է երրորդ տեղը Ռոստովի մարզում:

Ապա շրջանի գլխավորը նվերներ ու պարգևներ հանձնեց իրենց




մասնագիտության մեջ լավագույնը ճանաչված արտադրության առաջավորներին, "Լավագույն տաղավար" մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաև տոնավաճառին ակտիվորեն մասնակցած տնտեսությունների ղեկավարներին:

Հրապարակում ներկա գտնվողներին տոնի առթիվ սրտանց շնորհավորեցին նաև հարևան շրջաններից եկած հյուրերը: Նեկլինովկայի շրջանի գլխավոր Ա. Ի. Ժուռավլյովը ողջունագիր և հուշանվեր հանձնեց Մյասնիկյանի շրջանի գլխավոր Ա.Մ. Փորքշեյանին, իսկ Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Խ. Մ. Փորքշեյանին հանձնեց շնորհակալագիր՝ առաջավոր փորձի փոխանակության համար:

*Նկարներում՝ պահեր տոնակատարությունից:*

*Լուսանկարները՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*